

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

---

ԿՈՅԼՏՈՒՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Յ. ԼԻՊՈՂԵՐՏԻ.

## ԹԱՐԳՄԱՆՁԻՑ.

Do, ut des; do, ut facias.

Facio, ut des; facio, ut facias.

Տալիս եմ որ տաս. տալիս եմ որ գործես:

Գործում եմ որ տաս. գործում եմ որ գործես:

(Հռոմէական իրաւունքի հիմնականոններից:)

Լիպերտի «Կոլլտուրպատմութեան» երկրորդ հատորի նիւթն է «Հասարակութիւնը», այն է ընկերական ժների (ընտանիք, սեփականութիւն, կառավարութիւն և դատաստան) զարգացումը, որը մի ինքնուրոյն հետազուութիւն է շատ կողմերով արժանի լուրջ ուսումնասիրութեան առարկայ լինելու ինչպէս հայ բանասէրի, ազգագրի, հրապարակախօսի, գրողի և ուսուցչի, նոյնպէս և առհասարակ զարգացած հայ երիտասարդի: Լիպերտի նրբամիտ տաղանդը պատկերացնում է ընմերցողի առաջ լիշեալ ընկերածների զարգացումը որսորդական շրջանից սկսած մինչև բեղուն, քօչոր, երկրագործ և աւելի բարձր կոլլտուրքրջանները: Այստեղ ուշիմ ընմերցողի առաջ այնքան հետաքրքիր երևոյթներ են պարզում, այնպիսի լայն հօրիզոններ են բացում, որ նա ակամայ ճգնում է խորամուխ լինելու, թէ ինչպէս նախնական՝ կոլլտուրական ժառանգութիւնից գուրկ մարդը իր ապիկար դրութիւնից խարխափելով բարձրանում է կոլլտուրի նոյնանման աստիճաններով, չը նայելով տարբեր գոտիների և աշխարհամասների մէջ ապրելուն: Շատ երևոյթներ, որ մենք սովոր ենք ընդունել ինչպէս վայրենութեան սոսկ մնացորդներ, օրինակ — ստրկութիւնը, ժորտութիւնը, բազմակնութիւնը, վաճառամուսնութիւնը, ստըրկավաճառութիւնը, մարդագորութիւնը և այլն հանդիսանում են մի նոր լուսաւորութիւնով, այն է ինչպէս կոլլտուրի որոշ աստիճանում անհրաժեշտ յառաջադիմութեան ֆակտօրներ:

Լիպերտը ընդունում է համաձայն «Պատմական Մատերիալիսմի», որ ընկերածների զարգացման և փոփոխութեան հիմնական պատճառը մարդու ապրուստածարութեան կամ տնտեսական գործունէութեան ժների փոփոխութիւնն է: Ազդ փոփոխութիւնը, ի հարկէ, չէ լինում առանց կուի շահազրգուած կողմերի մէջ, բայց անհրաժեշտ չէ, որ դա արտայալուի անպատճառ ասպետական արինալին ընդհարումներով, որոնք ինքնըստինքեան նրբէք չեն ստեղծում նոր ընկերածներ, եթէ տնտեսական հիմքը համապատասխան կերպով փոխած չէ:

Կոհիւր՝ առհասարակ՝ և ինչպէս զինտրական գործողութիւն, առաջանում է կամ իբրև փոխւած տնտեսական յարաբնրութիւնների համապատասխան ձևակերպութիւն կամ իբրև անհրաժեշտութիւն որոշ, այնուամենայնիւ տնտեսական նոր փոխադարձութիւն հաստատելու պահպաններու: Անկասկած այդ երկու նրապատակներից մէկը կամ միաւ Թագնած է ամեն մի կրօնական, ցեղական-ազգային, ազատագրական, ազգների համերաշխութեան և այլ բազմաթիւ իդէալական սկզբունքներով մղած կոհիւներուն. և որքան դրանց մղողները թոյլ գիտակցութիւն ունենան այդ պատճառների վերաբերեալ, այնքան աւելի վտանգւած է այդպիսի կուի աջողութիւնը. և որքան նրանք աւելի արսօլիւա գաղափարական ազգասիրութիւնով ու անձնագործութիւնով տոգորուած լինին, այնքան անուղղելի կը լինի դրանց սիսալ ընթացքը: Ալդպիսի պայմաններում առաջացած կոհիւր, փոխանակ խաղաղութեան, այն է՝ տնտեսական նպատակի հասնելու, կարող է դառնալ անվերջ կուի կուի համար. այսինքն յետադրծ քայլ դէպի բնդիսութիւն, ասել է՝ կը գայ միանգամայն հակառակ այն հետևանքի, որին ծգտում է կոլլատուրը—այն է տնտեսական ապահովութեան բարիքը դարձնել ամրող մասսաների ժառանգութիւն, որքան հնար է կրծատելով մարդու ալդ կոյլտուրը ապահովելուն անհրաժեշտ ստիպողական աշխատանքը:

Նոյնպէս և կոյլտուրական պետակազմութեան հիմքը կազմում է դարձեալ նոյն տնտեսական նպատակը, որի համաձայն մի երկրում ապրող ցեղերի մէջ առաջանում է դաշնակցութիւն ներսից խաղաղութեան և դրսից ինքնապաշտպանութեան համար: Ալդպիսի դաշնակցութիւնների նպատակն է, բացի խաղաղութիւնից, նաև առեւրա-ամուսնական փոխադարձութիւն իրանց դաշնակիցների հետ: Կոյլտուրակետութիւնների համար պատերազմը միայն միջոց է խաղաղութիւնը պահպանելու, հակառակ բնդիսական պետութեան, որտեղ պատերազմը և նրան գուգընթաց աւագակութիւնը օրինաւոր պարապմունք—ապրուստի միջոց են: Ալդպիսի պետութիւն կազմող ցեղերի հարևանները ուրիշ հնար չունին, բայց եթէ լինել կամ մուրճ կամ զնդան, մինչեւ որ հարեւանը կը փոխէ իր տնտեսութեան ձեր:

Ահա այսպիսի բազմաթիւ ժամանակակից հրատապ հարցնը, որոնց մասին Լիպպերտի հետազոտութիւնները յուսով նեք բաւարար գոհացում տան հայ ընթերցողին. սրանով թերեւս օգնած կը լինենք այդ հարցերի գիտական լուսաբանութեան հայ ինտելիգենցիայի մէջ տարածելուն, որ մեր ցանկութիւնն է:

Ինչ վերաբերում է թարգմանութեանը՝ բացի քերականական ձևերի պարզացնելուց, մենք ստիպուած ենք եղել մտցնել օստար և նորակազմ հայ տեխնիքական բառեր և բարդութիւններ, որոնց՝ և առհասարակ՝ թարգմանութեան զնահատութիւնը պ. պ. գրախօսների քննադատութեանն ենք առաջարկում:

Ա. Կ.

25 Յուլիսի 1908 թիւ  
Մոսկա: